# ՅԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԻՔԱՆԻ ՊԱՏԿԵՐ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ
karine.rafaelyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Ընդունուած է ասել, որ խորհրդային վարչակարգի պայմաններում ապրած արուեստագէտների վրայ դրոշմուած է գրաքննութեան սահմանափակումների կնիքը եւ այն իր գոյութիւնն զգացնում է նաեւ յետխորհրդային ժամանակահատուածի ստեղծագործական որոնումներում ու երկնումներում: Այս իմաստով ամենախոցելին, թերեւս, գրականութիւնն է, առաւել եւս՝ քնարերգութիւնը, որն իր ստեղծողի հոգու, ներաշխարհի ամենաճշգրիտ արտապատկերն է, եթէ անկեղծ է, չպարտադրուած, արհեստականօրէն չգունազարդուած ու չաղաւաղուած:

*«Մեր անցած ուղին դաժան էր, դժուար: Մարդու կեանքի մանրամասները մեծ մասամբ գիպի ինքը միայն՝ մարդը: Մանաւանդ՝ ստեղծագործ մարդու դէպքում: Ես յիշում եմ՝ ինչ դիմադրողական ուժեր կային մեր դէմ. գրական անճաշակութիւն, բռնապիրական երկրի գրչակներ, գրականութիւն, որը սրիպում-փաթաթում էին ընթերցողի վզին, որովհետեւ վիթխարի պետութիւնն էր այդ գրականութեան թիկունքին: Մարդու կաղապարման մեծ գործընթաց էր դա, որը յետոյ քանդուեց, կաղապարը փշրուեց: Գրականութիւնը ազատութիւն է ուզում: Պիտի լինի խօսքի ազատութիւն: Եւ ըստ այդմ էլ գրողը կողմնորոշւում է: Նա է յաղթում, ով կարողանում է ճեղքել պատնէշը. անհեթեթութեան, թշնամանքի, գրական անորակ ճաշակների պատնէշը: Այս ամէնը մեծ թակարդներ են, որոնք սպասում են, հետեւում են մարդուն: Ստեղծագործ մարդուն՝ առաւել եւս»*[1]. այսպէս է բնորոշում իր եւ սերնդակիցների ստեղծագործական կեանքի խորհրդային եւ յետխորհրդային տարիները բանաստեղծ Արտեմ Յարութիւնեանը:

Եթէ քնարերգութիւնն իսկապէս հոգուց է ծնւում, ապա այն յուզում է իւրաքանչիւրին՝ անկախ հեղինակի ապրած ժամանակաշրջանից, նրան վերահսկող վարչակարգից, գաղափարական պարտադրանքներից եւ ինքնադրսեւորման արգելանքներից:

Այդպիսի հեղինակների պակաս չի ունեցել հայ գրականութիւնը ո՛չ խորհրդային, ո՛չ էլ յետխորհրդային տասնամեակներին: Եւ այն բանաստեղծները, որոնք իրենց ստեղծագործութիւններով առանձնանում էին նախորդ հասարակարգում, անկախ Հայաստանի պայմաններում եւս շարունակեցին հաստատակամ քայլել իրենց իսկ բացած բանաստեղծական ակօսով, բանաստեղծել ու յուզել ընթերցողներին՝ ասես ոչինչ էլ չէր փոխուել իրենց ստեղծագործական ներշնչանքի անդաստանում:

Իհարկէ, անդրադառնալ յետխորհրդային շրջանի բոլոր բանաստեղծներին մէկ յօդուածի շրջանակներում՝ անհնար է: Վտանգաւոր է անգամ

թուարկել անունները, քանի որ ապահովագրուած չես կարեւոր մէկին բաց թողնելու անյարմարութիւնից: Այս ուսումնասիրութիւնը սոսկ գրականագիտական մի հայեացք է՝ ուղղուած արդի հայ քնարերգութեան աւագ սերնդի որոշ ներկայացուցիչների՝ յետխորհրդային շրջանում գրուած ստեղծագործութիւններին: Այն յաւակնութիւն չունի աւարտուն խօսք ու բնութագիր դիտարկուելու: Այն չի ներառում մահացած հեղինակներին, որոնք քիչ չեն եւ թողել են պատկառելի բանաստեղծական ժառանգութիւն: Լիւդուիգ Դուրեանի, Հրաչեայ Թամրազեանի, Յովհաննէս Գրիգորեանի, Հրաչեայ Սարուխանի, Արմէն Մարտիրոսեանի, Արտակ Համբարձումեանի ստեղծագործութիւններուն անդրադառնալու առիթը կ'ունենանք *Հանդէսի* յաջորդ տարեգրքում:

Իսկ այս յօդուածում արդի հայ բանաստեղծութիւնը ապրեցնողների մի պատկառելի խումբ ենք ներառել: Բանաստեղծներ, որոնք մեր կողքին են ու ստեղծագործում են մեր ապրած ժամանակի մէջ:

**Հենրիկ Էդոյեան**[2] (ծն. 1940)

Հենրիկ Էդոյեանը յետխորհրդային շրջանում հրատարակել է.- *Քայլեր եւ Ստուերներ* (Պէյրութ, 2001), *Յեփգրութիւն* (Երեւան, 2001), *Երեք Օր Առանց Ժամանակի* (Երեւան, 2005), *Փողոցի Բաժանուող Մասում* (Երեւան, 2006), *Երկերի Ժողովածու, Հտր. 1, 2* (Երեւան, 2010) գրքերը:

Հենրիկ Էդոյեանի բանաստեղծութիւնը թանձր խոհի աշխարհն է: Նրա գիրը լրջախոհ է եւ մղում է լրջախոհութեան: Այդպէս նա պատմում է Աստծոյ, աստուածայինի, մօր, իր քաղաքի, հայրենիքի, իր ապրած ժամանակի, հասարակական-քաղաքական անցուդարձերի, իր ներզգացողութիւնների մասին: Յովհաննէս Շիրազի մայրերգութեանը սովոր հայ ընթերցողը Էդոյեանի պարագայում տեսնում է բոլորովին այլ մայրերգութիւն: Այն աւելի շատ բանաստեղծի ընկալման, մօր հանդէպ ունեցած զգացումների քնարերգութիւնն է, քան բուն մօր կերպարի: Մօր կեանքի տառապալից ուղին քննող բանաստեղծը գրում է.

*Բայց դու կարողացար անցնել քո ուղին*
*ինչպէս ուխտագնաց եւ քո մէջ պահել*
*այն փշերը, որոնք քեզ փրուել էին*
*բախտի կողմից, երբ ձեռքը քեզ մեկնած ամուր*
*մի հրեշտակ ասաց - «Կարո՞ղ ես սա տանել...»,*
*դու նրան ասացիր - «Կամքը քոնն է, տուր»*[3]*:*

Քաղաքի անհետացող դիմագիծը մղում է բանաստեղծին եղերերգ հիւսել հին շէնքերին: Ահա «Տաճարի Կառուցումը» բանաստեղծութիւնից մէկ քաղուածք.

*Քաղաքի կենտրոնում տաճարն է դանդաղ*
*բարձրանում հսկայ բետոնի անթափանց*
*զրահներով – մարտ մտնող հրասայլ, որ չի*

*համբերում կրակը թափելու ծառերի, խոտերի,*
*տների, պուրակների, անցորդների վրայ,*
*դանդաղ բարձրանում է փլատակների միջից*
*հարիւրամեակների, անանուն սերունդների,*
*լլկուած հոգիների, շուրջը սփռուած*
*քայքայուող շինութիւնների, դատարկ*
*կաֆէների[4], վախուորած խանութների,*
*ինքնագոհ դէմքերի, նիհար ուսերի, ելնում է*
*կապկպուած երկաթէ գօտիներով,*
*մետաղների դուրս ցցուած ծայրերով,*
*տախտակի կտորներով, (սա յիշեցնում է*
*Ղազարոսի յարութիւնը)[5]:*

Բանաստեղծին հետաքրքրող թեմաների ծիրում յաճախ յայտնւում են բանաստեղծութեան, բանաստեղծի, հենց իր իսկ անձի շուրջ պտտուող ներշնչումները: Նա որոշակիանում եւ վերացարկւում է այս դաշտում, արտածում բանաստեղծութեան մասին իր բանաձեւը.

*Պոէզիան ծերացել է,*
*նրա սրտուերը չի ծածկում այլեւս ոչ մի մերկութիւն[6]:*

Էդոյեանը փորձում է հասկանալ ու իր ընթերցողի համար մեկնել 21րդ դարի էութիւնը: Այս թեմային անդրադարձումներում յաճախ է յայտնւում դիցաբանական Սիզիփոսի կերպարը՝ ապարդիւն գլորուող քարի խորհրդանիշով: Նա անճանաչելի դարձած ժամանակի համապատկերում յիշում է այն տղային, որը

*...մտնում է այգի, նստում կարուսել,*
*(որի երգը նա վաղուց է լսել),*
*սակայն աչքերը նրա արցունքոտ*
*աշխարհում արդէն չի տեսնում ոչ ոք[7]:*

Բանաստեղծը որոնում է նոր օրերի խորհուրդը, ինքն իրեն՝ այդ իրարայաջորդ օրերի յորձանուտում, սակայն ինքնագտնումի ճիգերը ասես դատապարտուածութեան դրոշմն են կրում, ամէն բան անդէմ է, անբովանդակ ու անհեռանկար.

*Օրը գլորւում էր*
*քաղաքի վրայով,*
*գնում, հետ գալիս*
*ինչպէս Սիզիֆի քար:*
*Եւ կէսօրուայ մէջ*
*փողկապն արձակելով*
*փորձում էր ապրել*
*մի հին փղամարդ:*
*Հոգին խաչւում էր*
*բայց մարմինը դեռ*

*շրջում էր փողոցում.*
*ուր միակ շօշափելին*
*հենց իր սփուռն էր*[8]:

Երկու տարբեր հազարամեակներում ապրած մարդու ճակատագիրն ասես բեկուել է, ու այդ բեկումի մասին բանաստեղծութիւնը խոր փիլիսոփայական ատաղձով է հիւսւում: Մարդը յայտնուել է անսովոր, նորատիպ չափումներում, որոնք քմահաճօրէն տարուբերում են նրան, ինչպէս խամաճիկ.

*Կեանքը շատ է մօր,*
*թէեւ չի երեւում: Ինձ հետ խօսէք, համբերութեան*
*արթուն ոգիներ, 21-րդ դարի*
*էկրանը ձեզ համար փոքր է չափազանց:*
*Դուք չունէք Կիրակի օր: Դուք չունէք արձակուրդ:*
*Դուք ապրում էք յաւերժական մի գիշերուայ մէջ*
*եւ գծում սիրտը մարդու*
*իբրեւ մի երկնային երկրաչափութիւն*[9]:

Չորս պատից անդին՝ փողոցում, «*անցնում է շքերթը մարդասպաններ-ի*», որոնք քաղաք են խուժել Աստծոյ նիրհելու պահին: Եւ երազի վերածուող իր հնամեայ հայրենիքի փրկութիւնն այս քաոսից բանաստեղծը տեսնում է աստուածաշնչեան ոլորտներում.

*Թէ գոնէ մի պատուհան*
*չբացես դէպի երկինք -*
*տեսնելու պտոյտները երկնային*
*ոլորտների,*
*բոլոր դռները երկրային ճշմարտութեան*
*կը փակուեն քո առջեւ:*
*Ոչ մի դուռ չի բացուի*
*առանց երկնքի: Չկայ*
*ուրիշ ուղի*[10]:

Սիրոյ քնարն անգամ Էդոյեանի բանաստեղծութեան մէջ ներհիւսուած է աստուածաշնչեան նիւթին: Իբրեւ սիրոյ դրսեւորման բարձրագոյն տեսակ՝ նա վկայաբերում է «*սիրել մերձաւորին*» պատուիրանը, որից յետոյ «*անհնարին ոչինչ չկայ/սիրոյ ճիգերի մէջ*»[11]:

**Արտեմ Յարութիւնեան** (ծն.1945)

Արտեմ Յարութիւնեանը յետխորհրդային տարիներին հրատարակել է հետեւեալ գրքերը.- *Նամակ Նոյին Կամ Յոյսի Ահագնացում* (Երեւան, 1997), *Հեռուստապօէմներ 'Շուշի' Եւ 'Բաբելոն' Հիւրանոցների Աշտարակից* (Երեւան, 2010), *Հատընտիր* (Երեւան, 2014):

Մեր ժամանակների աշխարհաքաղաքական, հայաստանեան ներքաղաքական, ընկերահոգեբանական խնդիրների մի համահաւաք տեղեկա-

գիր է յիշեցնում Արտեմ Յարութիւնեանի բանաստեղծութիւնը: Անգամ դժուար է այս հեղինակին բանաստեղծ կոչել: Նրա գրականութիւնն ասես միջազգային եւ հանրապետական դատական ատեաններին ներկայացուած հայց լինի, որում հայցուորը տեղ-տեղ տրւում է բանաստեղծական զեղումներին: Նա ողբերգաերգիծական եզրոյթներով բնութագրում-համապատկերում է մեր ապրած ժամանակը, երեւան հանում «հարուստ ջիպածինների շարժում», «ազնիւ ֆինանսական հզօր մաֆիա», «օֆշոր երազներ», «քցող բանկեր» ու սրանց նման այլ ախտածին երեւոյթները: Նրա գրականութիւնը վկայում է հեղինակի՝ հայ գրական բառուբանին հրաշալիօրէն տիրապետելու փաստը, բայց նաեւ հաւաստում, որ այդ լեզուով մտածող ու գրող հեղինակը, տրուած ժամանակի եւ նիւթի պարտադրանքին, ոսկեղնիկ մայրենիին հմտօրէն համադրում է ռուսերէն եզրոյթներ, ոչ գրական արտայայտութիւններ, կենցաղային բառաշերտ եւ անգամ՝ հայհոյանք:

Հիմնականում առանց յանգերի գրող հեղինակը երբեմն անդրադառնում է յանգին: Բայց նրա բոլոր գործերն էլ պատումային բնոյթի են: Ասես մէկ ընդարձակ պոէմի տարբեր հատուածներն ենք կարդում Յարութիւնեանի առանձին բանաստեղծութիւններում: Նա իրեն տանջող խնդիրների, դրանց շուրջ խորհրդածումների, այդ խնդիրներին առնչուող պատմական անձնաւորութիւնների մասին է գրում: Նրա չափածոյում մշտապէս ներկայ են Թումանեանը, Չարենցը, Մանդելշտամը, ինչպէս եւ մերօրեայ վայ-հերոսները՝ համաշխարհային ու հայաստանեան քաղաքական-կուսակցական գործիչներ, քրէական յանցագործներ եւ, իհարկէ, բազմաչարչար հայ ժողովուրդը: Յարութունեանի չափածոյում, իբրեւ մտահոգութեան կենտրոն, կիզակէտ, շեշտադրւում է իր բնօրրան Արցախի, նրա անցած ու անցնելիք պատմական ճանապարհի թեման: Իր ու մեր ժամանակն այսպէս է բնութագրում գրողը.

*Դառը ժամանակներ,*
*գաղտնի ու անտես փշալարի դէմ-դիմաց:*
*Հիմա աւելի շատ քաղաքական կուսակցութիւն կայ,*
*քան բրդաթել*[12]:

Հայաստանը հեղեղած նոր չարիքը՝ կուսակցամոլութիւնը, բանաստեղծի թիրախում է: Նա ջղաձգւում է այդ սարդոստայնի կապանքներում: Ու այդ ջղաձգումը նրան մղում է վերերկրային դատողութիւնների տիրոյթ.

*Այսքան կուսակցութիւն ունեցող երկիրը,*
*պարզ է, մի օր հասնելու էր քաւարան,*
*ուր սողացող բոյսերը խրատ են կարդալու,*
*կանաչ ձեռքեր են հողից բարձրանալու,*
*որ ջնջեն ամօթը կեղծիքի,*
*սրբեն թռիչքը նախանձի, փոշու, ատելութեան,*
*եւ շօշափուկներն ամէն անցողիկի,*

*որով մենք յաւերժն ենք կառուցում*[13]:

Բանաստեղծը փորձում է համաժամանակեայ հայեացք ձգել Հայաստան Աշխարհի վրայ, հասկանալ, թէ իր հազարամեակների պատմութեան ո՛ր շրջափուլն է ապրում տառապեալ այս երկիրը: Եւ ցաւով արձանագրում է աւանդական նկարագրից նրա շեղուելու իրողութիւնը.

*...ո՞ր Հայաստանում ենք մենք հիմա,*
*եւ Հայաստանը զրկու՞մ է այսօր սպասելու իր ունակութիւնից*
*ամենաուժեղ գենը, որ նա փայփայում է դարէդար*[14]:

Ըստ Յարութիւնեանի՝ հայ ժողովուրդը յայտնուել է պատերազմի մի նոր տարատեսակի ճիրաններում՝ աղքատութեան.

*...աղքատութիւնը նոյն պատերազմն է՝*
*առանց զէնքի*[15]:

Եւ այս վիճակն ունի իր հեղինակը կամ հեղինակները. դրանք հայաստանեան ապաշնորհ ղեկավարներն են, որոնց կարծիքով.

*...խաւարը լաւագոյն սպեղանին է հոգեվարք*
*ապրող ժողովրդի համար, ուրիշ ձեւ չկայ՝ դա նատուռի*[16] *է*[17]:

Բանաստեղծն ինքն էլ սկսում է տարակուսել, թէ իր ապրած ժամանակներում հնարաւոր է բանաստեղծութիւն ստեղծել, բայց տարակուսանքից ծնւում է պատասխանը.

*Յեղասպան-դաժան ժամանակներում,*
*Կը լինի՞ արդեօք բանաստեղծութիւն՝*
*Կը լինի՛,*
*եւ կը լինի ցեղասպան ժամանակների մասին*[18]:

Եւ ուրեմն, պատահական չէ, որ Յարութիւնեանի բանաստեղծութիւնը դատավճիռ է ցեղասպանութիւն երեւոյթի նկատմամբ՝ համաժամանակեայ կտրուածքով: Նրա գրականութեան մէջ մակդիրի արժէք են ստացել Թալէաթի շարբաթի գաւաթը՝ լցուած ցեղասպանուած ազգերի արիւնով, եւ Գեբելսի «կոտլէտները»[19]՝ մարդու մսից պատրաստուած: Ու եթէ բանաստեղծի անձնական կսկիծը մղում է նրան առաւել յաճախ անդրադառնալ թուրքական թեմային, Արցախին, իր ազգի ապրած արհաւիրքներին, ապա լայնախոհութիւնը մղում է դատապարտումի սլաքներն ուղղել աւելի հեռուն ու աւելի խորքային երեւոյթների.

*Յեղասպանուած ազգերի ճիչը քաշ չունի՝*
*հերթական ջարդերի ժամանակ այն ցնդում է օդում,*
*դառնում 'քաղաքական' փաստաթղթի լուրջ 'վարկած'...*[20]

Ինչպէս տեսնում ենք, Յարութիւնեանը չի խօսում մէկ ազգի, մէկ մասնաւոր իրադարձութեան մասին: Նա նպատակ ունի ցոյց տալ, որ ամբողջ աշխարհն է վտանգուած: Ծաղրական բնութագրումներով ներկայացնում է մարդու իրաւունքների պաշտպանութեան գաղափարներին ծառայող միջազգային ատեաններն ու տարատեսակ կառոյցները, որոնք հաշուենկատորէն աչք են փակում աղաղակող յանցագործութիւնների դիմաց.

*...հիմա սպանում են յանուն առաջընթացի՝ ամէնուրեք,*
*եւ ամէն մեծ երկիր ազգեր բնաջնջելու իր լիմիտն ունի*[21]:

Յարութիւնեանի բանաստեղծութիւնները, որպէս կանոն, ծաւալուն են, նա ինքն իր ասելիքը քննում-ծանրութեթեւ է անում երկարաշունչ տողերի, էջերի սահմաններում: Եւ յաճախ այնպիսի վերնագրեր է տալիս բանաստեղծութիւններին, որոնք ասես համառօտագրում են դրանց տակ ներկայացուելիք նիւթը: Զորօրինակ՝ «Հասարակութիւնն Այսօր Դարձաւ 'Էդ Ձեւ' Կամ Ինչպէս Փողոցայինը Կ'ասէր՝ 'Նատուռի Երգիր'» կամ «Դժոխքի Պարունակներում Յայտնուած Հայաստանի Նախկին Նախագահի՝ ԼՏՊի, Նրա Սիրեցեալ 'Էներգակիր' Էներգաասպետ Նախարարի՝ Թաշչեանի Եւ Միւս 'Ջոջերի' Դիւային Պար-Շաբաշը 'Քցող' Բանկերի Հետ Ձեռք Ձեռքի Տուած»:

Միայն այս վերջին վերնագրի յենքով կարելի է քրէական գործ յարուցել ու հետաքննել պետական յանցագործութեան մէջ մեղադրուող անձանց, իսկ հայցի անհիմն լինելու դէպքում՝ «անմեղ» մարդկանց զրպարտող գրողին. բայց սա Հայաստանն է, այստեղ օրէնքն ու օրինաչափութիւններն այլ ուղեծրում են պտտւում: Եւ բանաստեղծի խօսքը մնում է «ձայն բարբառոյ յանապատի»:

Այսքան քաղաքականացուած չափածոյում, թւում է, տեղ չունի քնարականութիւնը, յոյզը: Բայց Յարութիւնեանի ստեղծագործութեան վաղ շրջանին բնորոշ բնութենապաշտական թեմաները արտայայտուած են նաեւ նոր գործերում: Արարատ Լեռան, Շուշիի, արցախեան լեռնաշխարհի ֆոնին տեսնում ենք յուզական գրողին՝ բանաստեղծական պատկերներ կառուցելու իր վարպետութեամբ.

*Արեւի ուղիղ*
*հարուածն ապակուն...*
*պատուհանները պտտւում են*
*մուրացկանի պէս*
*շողի հետեւից...*[22]:

Շուշիի լուսաբացի այս պատկերը եւ սրա նման այլք հաւաստում են, որ բոլոր ժամանակներում, բոլոր իրավիճակներում բանաստեղծը նախեւառաջ մնում է քնարերգու:

**Էդուարդ Միլիտոնեան** (ծն. 1952)

Էդուարդ Միլիտոնեանը հետխորհրդային տարիներին հրատարակել է հետեւեալ գրքերը.- *Վիշապի Տարի* (Երեւան, 1991), *Նոր Թուարկութիւն* (Երեւան, 1996), *Ընտանեկան Համերգ* (Երեւան, 1996), *Մատնահետք* (Երեւան, 2000), *Տեղեկատու Կատու* (Երեւան, 2001), *Այս Պահին* (Երեւան, 2003), *Վահագն Վիշապաքաղի Արկածները* (արձակ) (Երեւան, 2003), *Ձիու Քայլ* (թատրերգութիւն) (Երեւան, 2004), *Արքայադուստր Թարսինէն* (Ե-

ռեան, 2010), *Է* (Երեւան, 2013), *Բարձերով Կռիւ* (մանկական բանաստեղծութիւններ) (Երեւան, 2014), *Սկանդինաւեան Կրուիզ* (Երեւան, 2017):

Էդուարդ Միլիտոնեանի յետխորրդային շրջանի բանաստեղծութիւններն իր ապրած ժամանակի գեղարուեստական վաւերագրութիւններն են: Անկախութեան տարեգրութիւնը ցայտուն դրսեւորմամբ առկայ է նրա չափածոյում: Եւ քանի որ անկախացած Հայաստանն այլեւս մեծ կայսրութեան՝ իրաւաբանօրէն չառանձնացող միաւոր չէ, այլ ինքնակայ պետութիւն, ապա այդ պետութեան շահերն ու հակաշահերը քննելի են համաշխարհային երթուղարձերի համապատկերում: Եւ ի՞նչ է իրենից ներկայացնում այդ համապատկերը, որ բախուելով հայ ազգային իրականութեան ու անիրականութեան ապառաժին, ընդունում է այլանդակ ձեւեր, ներկայանում հաստ շպարի շերտը թօթափած զառամեալ դէմքի ողջ ահաւորութեամբ: Դա լաւագոյնս երեւում է «Հունգարիայի Գովազդային Վահանակ» բանաստեղծութեան մէջ: Եւրոպական դիւանագիտութեան, արդարադատութեան, նաւթադոլարներով տարուածութեան, քնած հային կացնահարողի հերոսացման թեմաները բանաստեղծը մատուցում է երգիծական լուծումով.

*Սա եւրամիութեան լաւագոյն տիկնիկային թատրոնն է:*
*Վերջում բաժանում են հերոսի կոչումներ եւ ոսկէ կացիններ*
*Հոների արքաների պատկերներով:*
*Իւրաքանչիւր տուրիստի՝ մի կոչում, մի կացին*
*Եւ մի քրքջացող դատավճիռ:*
*Տուրիստներ բոլոր երկրների, ձեր գլխին կը թեւածի*
*Դիւանագիտական ժպիտ, այն էլ՝ եւրոպական ժողովրդավարական:*
*21-րդ դարը այդ ժպիտի դարաշրջանն է: Պատրաստուէք*[23]:

Ժամանակի ու պատմաքաղաքական անցքերի քննութիւնը լայն հորիզոններից գալիս-տեղայնացւում է Միլիտոնեանի բանաստեղծութիւններում: Ռուս-վրացական զինուած հակամարտութեան պատկերները ներկայացւում են ականատեսի հայեացքով: Տարիներ առաջ տեղի ունեցած այդ կարճառօտ պատերազմի ակամայ վկաները դարձան վրացական ծովափերում հանգստացող շատ հայ հովեկներ: Եւ նրանցից մէկը՝ բանաստեղծը, բանաստեղծացրեց այդ պատերազմը ահա այսպէս.

*Այս հանգիստն համընկաւ պատերազմի հետ:*
*Ուրիշ երկրում:*
*Երկակի ստանդարտների բարկ աւազի վրայ*
*Մարմինը եփւում է՝ կովկասեան խորոված:*
*Ռուսական լուրեր ուղեղի ձախ կիսագնդի համար:*
*Վրացական՝ աջ կիսագնդի,*
*Հայկական՝ մէջտեղի:*
*Ճշմարտութեան արկն է մարդկանց գլխին ընկած,*
*Բայց նա պայթել է, եւ ոչ ոք չգիտի նրա տեղը*[24]:

Հարեւանի ցաւին ցաւակից բանաստեղծը, այնուամենայնիւ, ուղեղի կենտրոնում պահում է իր ցաւը՝ ազգայինը: Եւ ուրիշի պատերազմի մէջ յայտնուածի ապրումներն անխուսափելիօրէն նրան մղում են դէպի սեփական պատերազմի մասին խոհը. հարեւան երկրում յայտարարուած է արտակարգ դրութիւն, հայ հովեկը պիտի ընտրութիւն կատարի՝ մնա՞լ այդ դրութեան մէջ եւ ծովափնեայ արեւին ու աւազին փարուած՝ «ժպտալ անհասցէ», թէ՞ վերադառնալ տուն՝ «մի դրութեան՝ առաւել արտակարգ»:

2015ը իւրաքանչիւր հայի, առաւելապէս՝ մտաւորականի, արուեստագէտի համար տրոփում էր մի երակով՝ Հայոց դէմ գործադրուած Ցեղասպանութեան 100ամեայ դառնութեամբ առլեցուն: Միեւնոյն ներշնչանքի տարբեր երկնումների ականատես ու ականջալուր եղանք այդ ընթացքում: Միլիտոնեանի գիրը մեզ պատմեց 1915ի իր ցաւը՝ սարիթաղեան մանրանուագներով: «15 Թիւը Սարի Թաղի Մեր Փողոցում» շարքը իր առերեւոյթ հանդարտ պտոյտի մէջ է առնում ընթերցողին ու տանում հայրենադարձներով բնակեցուած ծուռումուռ դարուփոսերի աշխարհը՝ Երեւանի կորչող պատկերն իր վրայ կրող Սարի Թաղ, որի բնակիչները լռութեան մէջ, առօրեայ համակերպումի ընթացքի մէջ, միեւնոյն է, մռնչում են ապրած սարսափի, կորցրածի, չգտնուողի ցաւից: Այստեղ Ղազար քեռին է՝ իր ձեռքերով Մասիս Սարի կրծքին քրոջ համար գերեզման փորած ու հողից դուրս պրծած նրա շորի սպիտակ փէշի ծածանումին ակնդէտ հետեւող, հիւսն Գրիգոր Հոգիկեանը, տիկին Յասմիկը, Յակոբ ախպարը, որ պիտի ապրեն նոր ցեղասպանութիւն՝ հայրենիքից արտագաղթած զաւակների տեսքով, սիրիացի պառաւ տատմէրը, որի ժանգոտ դանակը գրողի երեւակայութեան մէջ պիտի խաչուի թուրքական եաթաղանի հետ, Հոգիկեան Պարգեւը, որ պիտի 1965ի ազգային զարթօնքի անհասկանալի շօշափուկները բերի Սարի Թաղ՝ Ամերիկա տեղափոխուելուց առաջ: Եւ էլի շատերը՝ իրենց պատմութիւններով: Իսկ 1915ի չսպիացող վէրքը պիտի բորբոքուի Հրանդ Տինքի կօշիկի ներբանից նայող սեւ ծակի տեսքով.

*Հրանտ Դինքը զարկուած, ընկած էր*
*Ստամբուլի Շիշլի փողոցում:*
*Նրան շատերն էին համեմատում*
*Աղաւնու հետ,*
*Բայց թռչունը, ինչպէս բոլորդ գիտէք,*
*Կօշիկ չունի,*
*Իսկ Հրանտի կօշիկը ծակ էր*
*Ու զարմացած, քարացած անցքը*
*Շիշլի փողոցի անցորդներին,*
*Ստամբուլի վեր ու վարին,*
*Երկնքի ամպերին*
*Նայում էր կոյր աչքի նման:*
*100 տարի յետոյ էլ վտանգաւոր է Թուրքիայում խօսել*

*Հայոց Եղեռնի մասին,*
*Երբ կոշիկդ ծակ է,*
*Եւ անցքը նման է*
*Տիեզերքի ակնախոռոչում անտարբեր պտտուող*
*Երկրագնդի*[25]:

Միլիտոնեանին անհանգստացնող թեմաներից է նաեւ իր քաղաքի եւ քաղաքացու անհետացող դիմագիծը:

Բայց նա նաեւ երազող է: Նրան գրաւում են բնութիւնը, կանայք, մարդկային թուլութիւններին չընդդիմանալու անհրաժեշտութիւնը: Տարիքի, կենսափորձի, աշխարհընկալման որակները բանաստեղծական երազայնութեանը ներարկում են հաւասարակշռութեան խաբկանքը:

*Մտապատկերների ջունգլիներից դուրս պրծան*
*Նետաձիգ մերկանդամ կանայք,*
*Նրանք անխնայ զարկում էին նրանց,*
*Ովքեր գիծ էին քաշում*
*Սիրոյ եւ սեքսի միջեւ:*
*Սէրը սոցիալիզմի որդեգիրն էր,*
*Սեքսը՝ կապիտալիզմի*[26]:

Քանի որ բանաստեղծի երկխօսութիւնը տիեզերքի հետ է, ուստի Աստծոյ հետ բանավիճելը՝ հաւասարը հաւասարի իրաւունքով, վաղուց չի զարմացնում: Եւ Միլիտոնեանը բացառութիւն չէ: Նա չի երկնչում հաւասարի իր իրաւունքին խառնել ամբարտաւանութեան տարրը.

*Ես գրեցի հոնորարի եւ փառքի համար,*
*Իսկ դու, Աստուած, ի՞նչդ էր պակաս*[27]:

Հարցերի, պատասխանների, անհասցէ ու հասցէագրուած ուղերձների այս ամբողջութիւնն էլ պայմանաւորել է Միլիտոնեանի յետխորհրդային շրջանի չափածոյի կերպը, որի յետագայ զարգացումներում չի բացառւում որեւէ անակնկալ:

**Յակոբ Մովսէս** (ծն. 1952)

Յակոբ Մովսէսը յետխորհրդային տարիներին հրատարակել է հետեւեալ գրքերը.- *Գիրք Ծաղկման* (Երեւան, 1992), *Բանաստեղծութիւններ* (Երեւան, 2005), *Լոյս Զուարթ* (Երեւան, 2009), *Եօթներորդ Որսորդութիւն* (Երեւան, 2013), *Գրառումներ* (Երեւան, 2015), *Շարական* (Երեւան, 2017), *Գրառումներ 2* (Երեւան, 2017):

Յետխորհրդային ժամանակաշրջանում եղան բանաստեղծներ, որոնք ոչ միայն բանաստեղծեցին, այլեւ մասնակցեցին նորաստեղծ պետութեան կառավարմանը: Դրանցից մէկն է Յակոբ Մովսէսը[28]: Նրա բանաստեղծութիւնը, եթէ անգամ յանգաւորուած չափածոյ է, արձակ պատումի տպաւորութիւն է թողնում: Թւում է, թէ սպիտակ, անյանգ տողերով պատմութիւն ես կարդում: Երբեմն - կամ շատ յաճախ - ընդհանուր շարադրանքի

մէջ դժուար է տարորոշում, առանձնանում բառը. տրտում ես ընթերցումի ընթացքին եւ չես որոշակիացնում այս կամ այն բառը, այս կամ այն արտայայտութիւնը, ինչպէս լինում է երաժշտութիւն լսելիս, երբ ունկնդիրն ես դառնում ոչ թէ առանձին նոտաների, այլ մեղեդու: Բայց մէկ էլ ինչ-որ շեշտակի ազդակ քեզ դուրս է բերում խաղաղ, մեղեդային նիրվանայից: Կտրուկ կանգ ես առնում, սթափւում, որովհետեւ հանդիպել ես ինչ-որ տողի, բառի, որը ներդաշնակ լինելով քեզ իր մէջ առած համանուագին՝ առանձին ուժգնութեամբ է բախուել զգայարաններիդ, ապրումի ու խոհի նոր մակարդակ է բացել քեզ համար:

Տեղ-տեղ պարզապէս բանաստեղծական պատկերն է գծագրում՝ իրեն ստորադասելով դրա տակ քօղարկուած ասելիքը: Գրողի անդրադարձները աշխարհարարումի, աշխարհաւերման, մահուան խորհրդին, որքան էլ հնչեղանում, միեւնոյն է, չեն ստուերում բանաստեղծական պատկերի հմայքը, չեն խանգարում խոհի հոսքում զատորոշել այն.

*Արշալոյսի գրկում*
*Լոյսի կաթնափամը արդէն*
*Լինդն էր ճեղքել*[29]:

Յակոբ Մովսէսը մտորում է բանաստեղծի առաքելութեան, նրան վիճակուած գոյաձեւի շուրջ: Փորձում է բանաձեւել բանաստեղծ-երեւոյթը՝ նրան դիտարկելով իբրեւ աշխարհի եւ Աստծոյ միջեւ ձգուող կամուրջ, իբրեւ ոսկեխոյզ, որ ուզում է «*բառերի ոսկին կորզել*»:

Բանաստեղծը կանգնած է աշխարհարարման եւ աշխարհաւերման հատման կէտում: Նա է, որ պիտի վկայի արարումը, նաեւ՝ վաւերագրի անհնարինը, անշրջելին.

*Երկու հոգի գնում էին*
*Եւ իրար հետ խօսում եղածների մասին*
*Եւ փրփուած էին,*
*Այդ ու՞ր, ու՞ր այսպէս վաղ,*
*Դէմները կտրեցի ես,*
*Մենք գնում ենք առաջն առնենք, ինձ ասացին,*
*Քանզի աշխարհը, մենք այդպէս ենք լսել,*
*- Հոջացել է իր արարման համար*
*Եւ ուզում է անցնել*[30]:

Եւ քանի որ բանաստեղծը ամենալարուած պահերի, ամենաճակատագրական դիպուածների տարեգիրն է, ուստի, մեծ հաշուով, անհաղորդ է մարդկային պարզ ուրախութիւններին: Նրան խորթ է խրախճանքի վայելքը: Բանաստեղծը թախծում է այն պահերին, երբ ենթադրւում է համընդհանուր ուրախութիւն: Ու նրա երկխօսութիւնն այս դէպքում իր արցունքի հետ է.

*Այնուհետեւ նախատեսուած էր ծափ ու ծիծաղ,*
*Բայց դու, արցունքի՛ կաթիլ,*

*Այդ ինչու՞ դու*
*Եկար*[31]:

Արեւմտեան Հայաստանի պատկերները, որքան էլ որ քօղարկուած են խոհի ու քնարականութեան շղարշով, տագնապի, ցաւի, կորստի զգացողութեան շեշտադրումներից զերծ չեն մնում: «Կոստանդնուպոլիս: Սուրբ Սոֆիա 1993» բանաստեղծութեան մէջ կարդում ենք.

*Ես մի պահ մոլորուեցի*
*Եւ, շրջուելով, յանկարծ տեսայ ժամանակը*
*Սուրբ տաճարի պատի տակ՝*
*Թուրը ձեռքին եւ կապտաղի,*
*Մօր գրկից մանուկ հասակում*
*Դարեր առաջ խլուած*
*Ենիչերին*[32]:

Ու Աստծուն յղուած ոչ-յանդուգն դատապարտում կայ այս բանաստեղծութիւններում, բայց եւ զուսպ դատապարտումին զուգահեռ՝ Աստծուն ճշմարտութեանը հասու դարձնելու, իր բացթողումին իրազեկելու նպատակ, այդ բացթողումը շտկելու աղերս-պահանջ, որ այսպէս է ձեւակերպւում «Աղթամար: Սուրբ Խաչ 1993» բանաստեղծական պատումում.

*Տէ՛ր, եթէ դու մօտը լինէիր, մեռած չէր լինի նա*[33]:

Այնուամենայնիւ, բանաստեղծն ունի ազգութիւն: Նրա համատիեզերական ներշնչանքը, դէպի երկինք ձգտող էութիւնը նիւթականանում է, անգամ դառնում կենցաղային, եթէ իր ազգային նախասկիզը ինչ-ինչ պատճառներով դէմ է առել խութերի եւ շեղուել իր համար նախասահմանուած ընթացքից: Յակոբ Մովսէսն իր ազգը, իր ծինատիպը տեսնում եւ տեսցնում է երկնային հոլովոյթում. հայերը երկնքի պատուիրակներն են այս հողագնդի վրայ, որ անկախ ժամանակի ու պարագաների կենցաղային պարտադրանքից՝ յամառօրէն չեն լքում ի սկզբանէ իրենց վերապահուած տիեզերական տարածութիւնը եւ չեն տրւում վաղանցիկ հողմերին.

*Իմ երկրում հիմա նեղութիւն է, ալիւրը՝ քիչ,*
*Բայց իմ բեռները միշտ երկնքից են եկել*[34]:

Այսպիսին էր հայի կենցաղապատումը 1993ին, եւ ալիւրի սակաւութեան թեման չէր կարող շրջանցել հայ բանաստեղծին: Բայց դրան հետեւում են այլ ժամանակներ, որոնք բերում են այլ խոհեր եւ զգացումներ: Բանաստեղծը՝ հերթական նաւաբեկութիւնից վերապրածի բախտաւորութեամբ, հանապազօրեայ հացն ունեցողի ապահով զգացումով տրւում է փիլիսոփայելու վայելքին: Այս դէպքում նա ինքն իր համար գաղափարներ է արտածում, որոնց հետ կարող է ընթերցողը, երբեմն նաեւ՝ հենց ինքը համաձայն չլինել.

*Ո՞վ դուք անկումներ եւ կործանումներ,*
*փլուզումներ եւ կորուստներ անհուն:*
*Գուցէ ձեզնո՞վ է յաւերժութիւնն իր երկնային*

*որջում ծագերին սնում*[35]:

Որոշ դէպքերում բանաստեղծը պարզապէս վերածում է հեքիաթասացի եւ հրամցնում հետաքրքրաշարժ պատմութիւններ, որոնք ընթերցելիս չես զգում ո՛չ գաղափարի, ո՛չ պատկերի, ո՛չ էլ բառի ներկայութիւնը: Ընդամէնը ցանկանում ես իմանալ, թէ ինչ կը լինի հեքիաթի վերջում: Ահա մի քաղուածք «Վկայութիւններ» ստեղծագործութիւնից.

*Եթէ անցորդը, կանգնած ջրերի դէմ,*
*Ունկը պարզել է նուագներին մահի*
*Եւ հագել է իր սանդալները արդէն,-*
*Դուք նրան այստեղ այլեւս չէք պահի*[36]:

Երբ կարդում ես այսպիսի տողեր, հետաքրքրութիւնը յաղթում է դատողութեան ուժին. արդէն հեքիաթասացի որսացանցում ես, հասկանում ես, որ ինչ-որ նորօրեայ առասպելաբանութիւն է հիւսւում, եւ դու այլեւս ընդամէնը բանաստեղծութիւն չէ, որ կարդում ես:

Սիրերգութեան մէջ եւս գիւտարար է Յակոբ Մովսէսը: Նա երեւան է հանում, սիրոյ անունը չտալով, սիրոյ մասին խօսելու բանալին.-

*Սէրն անուն չունի: Կամաց մօտենում*
*Եւ իր անունը նա մեզ է դնում:*
*Յոյսը իր վերջին շապիկն է հանում*
*Եւ արտասուելով մեզ է հագցնում:*
*- Օրապահիկն է քարերին բացում,*
*Բայց չի ուտում, այլ - մեզ է մատուցում:*
*Սէրն անուն չունի,- մերկ եւ անանուն,-*
*Բայց նա բոլորիս անուն է դնում*[37]:

Ըստ նրա՝ բանաստեղծը ոչ թէ արարող է, այլ հպատակ: Նա հպատակի իր վախերն ունի, չբաւարարելու, չտոկալու տագնապը: Տիրակալը ներշնչանքն է, երգը, որին գոհացնել է հարկաւոր, եթէ անգամ պատրաստ չես դրան, եթէ անգամ նա իր հրամանն արձակել է քեզ համար ոչ բարեպատեհ ժամի.

*Գիշերը դարձեալ մատներն է դնում*
*Իր եբենոսեայ նուագարանին:*
*Մթութեան խորքում երգն է բարձրանում:*
*Այդ նրա թելն է հիւսւում մտերիմ:*
*Բայց ես ի՞նչ անեմ, եթէ շարանին*
*Պէտք չգայ բերած մարգարիտը իմ*[38]:

Բանաստեղծումին յաջորդած վիճակն էլ նոր բանաստեղծութեան, նոր հրամանի սպասումն է համատարած: Ու անվերջանալի այս պտոյտի մէջ՝ բառախաղերի, բառատարափի, բառաշինութեան խառնարանում, «որսին դարանակալած»՝ սպասում է բանաստեղծը, մինչեւ որ բառախեցու մէջ կը հասունանայ հերթական մարգարիտը.

*Պահակութեան է կանգնած աշխարհում ջրերի վրայ*

*բառն՝ իրի հոգին,*
*Իրը իր անուան մարգարիտը է իր մէջ խեցու պէս*
*հասունացնում փեղկերում իր զոյգ*[39]:

**Արմէն Շեկոյեան** (ծն. 1953)

Արմէն Շէկոյեանը յետխորհրդային տարիներին հրատարակել է հետեւեալ գրքերը.- *Թուղթ Ու Գիր* (Երեւան, 1991), *Անտիպօէզիա* (Երեւան, 2000), *Երեւան-Հիւրանոց* (Երեւան, 2003), *Մետրաքսի Ճանապարհ* (պատմուածքների ժողովածու) (Երեւան, 2004):

Արմէն Շեկոյեան անունը զուգակցում է թարմութեան ու անսովորութեան հետ: Այս հեղինակի իւրաքանչիւր նոր գործին առնչուելուց առաջ անսպասելիի սպասումն ես ունենում: Շեկոյեանի յետխորհրդային շրջանի բանաստեղծութիւնն ամփոփուած է *Երեւան Հիւրանոց* եւ *Անտիպոէզիա* գրքերում: Շեկոյեանը Երեւանի երգիչն է՝ առաւելապէս թաղուած նրա խուլ ու անծանօթ յետնախորշերում, որոնցից բանաստեղծութեան համար նիւթ քաղելն արդէն իսկ բանաստեղծական մեծ սխրանք է ենթադրում: Նրա բանաստեղծութիւնն առտնին զբաղմունքի, առօրեայ զրոյցի կաղապարն է կրում, սակայն այդ կաղապարից ներս անյատակ խորութեան, անեզրութեան տարածութիւններն են քօղարկուած:

Բանաստեղծի քնարական հերոսը երեւանցին է՝ իր մտահոգութիւններով, իր հիասթափութիւններով, իր կենսասիրութեամբ, իր ծաղրով սեփական անձի ու միջավայրի հանդէպ:

*Ես դեգերելով շարունակուեցի*
*Երկիր յորջորջուող լաբիրինթոսում:*
*Շարունակւում եմ անվերջ ու հոսում*
*անանցանելի ու մութ էս փոսում:*
*Շարունակւում եմ էս անլոյս մթնում.*
*քչփորում եմ, բայց ելքը չեմ գտնում*[40]:

Պատկերը դառնում է մի ճկուն ատաղձ, որի առանցքում հեղինակն է, իսկ նրա բազմանկիւն տեսադաշտում զատորոշւում են քաղաքի դէմքերը.

*Ինձ գիտեն բոլոր մեղաւորները,*
*մօրուքաւոր ու բէղաւորները,*
*անմօրուսները եւ անբէղները,*
*անմեղսունակներն ու անմեղները,*
*բոլոր գիտուններն ու թերուսները,*
*նամուսովներն ու աննամուսները:*
*Ինձ գիտեն բոլոր նկարիչները,*
*մուտիլովչիկներն*[41] *ու սադրիչները,*
*բոլոր օձերը եւ կարիճները,*
*ենթակաները եւ վարիչները:*
*Ինձ գիտեն բոլոր գրամոլները,*

*Ինձ գիտեն բոլոր խաղամոլները,*
*որ խարխափում են էս անլոյս մթնում:*
*Նրանք ինձ գիտեն, սակայն չեն գտնում:*
*Ինձ գիտեն նախկին ու նոր տէրերը,*
*որ ճիշտ բաշխեցին մեզ մեր դերերը:*
*Ինձ գիտեն նաեւ վարձակալները,*
*գիտեն հին ու նոր գործակալները,*
*որ խարխափում են էս անլոյս մթնում:*
*Ինձ գիտեն, սակայն հետքս չեն գտնում:*
*Ինձ գիտեն բոլոր մուրացկանները,*
*բոլոր ծախորդներն ու վարձկանները,*
*ինձ գիտեն բոլոր ընչազուրկները,*
*ինձ գիտեն բոլոր գործազուրկները,*
*գիտեն քաղաքներն ու խուլ գիւղերը,*
*գիտեն ջեբկիրներն ու լուրջ գողերը,*
*ովքեր ցնծում են էս անլոյս մթնում,*
*զի՝ ամէնուրեք աւար են փնտռում*[42]:

Ակնառու է, թէ որքան անսահմանափակ ու բազմաշերտ է Շեկոյեանի հայերէնաիմացութիւնը: Նա վարպետօրէն խաղացնում է հայերէնի հարուստ բառանիւթը, իր բանաստեղծական խօսքում համադրում գրականից մինչեւ փողոցային բառաշերտ ու հայհոյախօսութիւն ձգտող բառատարածութիւնը: Ու թէեւ ակնյայտ է, որ բանաստեղծի խօսքը ներամփոփում է դառնութեան, իրականութիւնից իրաւացի դժգոհութեան չափաբաժին, այդուհանդերձ, Շեկոյեանը լի է սիրով իր բաժին աշխարհի ու այդ աշխարհի բնակիչների հանդէպ:

*Ես սիրում եմ Ձեզ, չնայած երբեք*
*չէք պատասխանել իմ խեղճ հարցերին:*
*Սիրում եմ անցած-գնացածներին,*
*սիրում եմ եկած-մնացածներին,*
*խեղճ կոտրրուածին ու սուտ կարծրրին,*
*մօտիկ ցածրրին, հեռու բարձրրին,*
*անխրտիր բոլոր մնացածներին՝*
*ովքեր սովոր են փափուկ բարձերին,*
*ովքեր սովոր են բանտ ու կարցերին*[43],
*բոլոր բարձրացած ու ցցուածներին,*
*բոլոր բարձրացած ու գցուածներին,*
*բոլոր բարձրացած ու ձգուածներին,*
*բոլոր բարձրացած ու յղկուածներին,*
*բոլոր խեղճացած ու քցուածներին,*
*բոլոր խեղճացած ու կքուածներին,*
*բոլոր խեղճացած ու լքուածներին:*

*Սա կեանք չէ. համակ Սէր է՝ լոյսի փօն.*
*եւ Սէրն ամուր է՝ զերդ ցեմենտբետոն.*
*եւ Յոյսն ամուր է՝ զերդ ցեմենտբետոն:*
*Կը սիրեմ Ձեզ ու Կեանքն այս, քանի դեռ*
*նախագահը չի դրել իր վետօն*[44]:

Սէրն այլ չափումների ու բնորոշիչների ծիրում է յայտնւում, երբ դառնում է տղամարդու սէր՝ առ կինը. այս դէպքում կեանքը գունեղ ու վառվռուն է պատկերանում, սիրահարները՝ արքայական ներյարդարանքով.

*Ձմեռն անցաւ: Ասպուած իր հետ.*
*գնա՛յ էլ, գա՛յ էլ:*
*Էս ընթացքում դու ոչ մի օր*
*չես բացակայել*
*մտածմունքից իմ շուրջօրեայ՝*
*ճոխ ու գունաւոր,*
*ուր դու անվերջ թագուհի ես,*
*ու ես՝ թագաւոր*[45]:

Իր ապրած կեանքին անդրադարձումներում բանաստեղծը գծում է մեր ընդհանրական գոյութեան պատկերը. մենք սիրում ենք պանծացնել մեր անցեալն ու դժգոհել ներկայից: Ապրում ենք՝ չզգալով ապրածի հմայքն ու իրեղէնութիւնը, ամէն բան ընկալում ենք իբրեւ փորձութիւն ու փորձարարութիւն: Սա գոյութեան մեր ինքնօրինակութիւնն է, որն այսպէս է բանաստեղծում Շեկոյեանը «Փորձնական Եթեր» ստեղծագործութեան մէջ.

*Կեանքը սա՞ է, Տէր իմ, թէ՞*
*էլի բաներ կան:*
*Անվերջ քաղցր անցեալն է*
*ու փըփիպ ներկա՞ն:*
*Մերթ խնդում եմ, մերթ լալիս՝*
*որպէս մի Վերթեր:*
*Կեա՞նք է արդեօք, Տէր իմ, թէ՞*
*փորձնական եթեր*[46]:

Շեկոյեանն ունենում է նաեւ ստեղծագործական ներշնչանքից օտարուելու զգացումը, խոստովանում, որ բառն իր գրչի տակ այլեւս դժուարանում է «հուրհրալ»: Բայց եւ չի կորցնում պրպտելու, անիմանալին երեւան հանելու ձգտումը, չի դադարում այդ որոնումների մէջ ներքաշել Բարձրեալին, որին դիմում է այսպիսի տողերով.

*Անհնարին էր լինել էսքան*
*անյիշաչար ու ներողամիտ,*
*բայցեւայնպէս՝ Դու եղար, սակայն*
*Դու երեխայ չես. Դու միամիտ*
*մի երեխայ չես. եւ այստեղից*
*չես հեռանալու՝ մինչեւ դարձեալ*

*ճանաչենք Քեզ. ու մեր անիծեալ*
*յիշողութիւնը շարժենք տեղից*[47]:

**Յովիկ Հովէեան** (ծն. 1956)

Յովիկ Հովեյեանը յետխորհրդային տարիներին հրատարակել է հետեւեալ գրքերը.- *Արահետ* (Երեւան, 1990), *Աստղագուշակ* (Երեւան, 1995), *Արեգակն Արդար* (Երեւան, 1997), *Թափառական Ամառներ* (Երեւան, 1999), *Ծէս* (Երեւան, 2000), *Ժայռագրեր* (Երեւան, 2003), *Ուրարտական Անձրեւներ* (Երեւան, 2009), *Յիշողութեան Կաւ* (Երեւան, 2011), *Վրիպած Ջրհեղեղ* (Երեւան, 2014), *Քամիների Վերադարձը* (պարսկերէն, Թեհրան, 2015), *Անժամանակութիւն* (Երեւան, 2015):

Անկախութեան շրջանի բանաստեղծական դաշտում առանձնացող ներկայութիւն է Յովիկ Հովէեանը: Նա առասպելականի, անմեկնելիի, անիմանալիի խորհուրդներով տարուած յօրինող է: Իր ներաշխարհի որոնումներին հետամուտ՝ նա այսօրուայ ապրումի սաղմերը շօշափում-երեւան է հանում հնամենի պատմութեան խորաշերտերում, որոնց միջից երեւակւում են հեռաւոր ժամանակների առարկայօրէն յստակ պատկերները՝ մերօրեայ տագնապների արձագանգներով:

Հովէեանն անվերջ փնտռտուքի մէջ է. գտնում ու չի գտնում ինքն իրեն, իր նախահայրերի, արքաների, հաւատալիքների շաւիղները: Նրա ժամանակացոյցը յաճախ դուրս է ելնում արեգակնային ծիրից ու տրւում ինքնագլուխ չափուձեւումների սլացքին. ըստ այդ ժամանակացոյցի՝

*Աշունն անց է*
*Մի փունջ հիացում*
*Ովկիանոսն անց է*
*մի վերջին գետամէջ*
*Ժամանակն անց է*
*մի ողջ անժամանակութիւն...*[48]:

Ինքնորոնումի ուղին դառնում է չվերջացող մի ճանապարհ՝ բազում ու տարաբնոյթ կանգառներով: «Փշաքաղուած խաչերով» լեցուն Եփրատի ափին, օրինակ, նրա կանգառը արաբ ձկնորսի ձեռամբ ափ հանուած տատի հետ նախասահմանուած հանդիպումով է պատճառաբանուած.

*Արաբ ձկնորսը*
*Խաչ էր որսում...*
*Այս մէկն*
*Իմ տատն էր՝*
*Արնոտ թեփուկներով...*[49]:

Յետոյ ինքնորոնումը երկրայինից տեղափոխւում է երկնային սահմանագծերի ոլորտ, ու ելքի չգտնումը բանաստեղծին չի ընկճում. ճարպիկ մի հնարքով նա իր ու մեր բոլորի համեստ բոյնն է հիւսում Փրկչի տիրոյթներում եւ փաստօրէն նախանշում ինքնափրկման ամենահաւաստի ուղին.

*Յիսուս Քրիստոս՝*
*Երկնքի ու Երկրի միջեւ*
*Անվերջօրէն ծաւալուող*
*Ձեռագիր մատեան...*
*Եւ ես՝*
*Տողադարձդ*
*Ձնչին...*[50]:

Հովէեանի բանաստեղծութիւններում ժամանակակից ու անգամ ոչ-բանաստեղծական աղմուկը տարերայնօրէն մխրճւում է քնարական գանձերի միջնադար եւ հասնում դրանից էլ անդին՝ իր պտոյտի մէջ առնելով նախաջրհեղեղեան առեղծուածային ժամանակներից մինչեւ «թափանցիկ» նախընտրականը, մագաղաթաբոյր ծիսանուագներից մինչեւ մերսեդէսի շչակներն ու «ջազի հատապտուղներից պատրաստուած կոկտէյլները», անցեալի մարմրող թափառական երազներից մինչեւ մոնիթորինգային վազքերը ծաւալուող անցուդարձերը:

Նրա գրքերը՝ պատմական ու նախապատմական ժամանակներն ակնարկող վերնագրերով (*Յիշողութեան Կաւ, Ուրարտական Անձրեւներ, Վրիպած Ջրհեղեղ, Անժամանակութիւն* եւն.) յուշում են, որ դրանց էջերում ընթերցողը գտնելու է անյայտ ու անմեկնելի ինչ-որ ժամանակների կամ անժամանակների ընթացագրութիւնը: Եւ իսկապէս էլ գտնում է:

«Նէօհայկական Ֆուտիւր» շարքում մենք տեսնում-յայտնաբերում ենք փոքր-ինչ անսովոր Հովէեանին: Իր ապրած ժամանակի բանաստեղծացումը նա սովորաբար մատուցում է բոհեմական նրբերանգներով, սաքսոֆոնաջազային մանրանուագների ելեւէջներով, ինչ-որ տեղ քաղքենիօրէն շքեղ փայլով: Այնինչ այս շարքում տեսնում ենք նոր «այսօրապատում», որը հողեղէն է, կոպիտ, ասֆալտամերձ, հմայաթափ:

*Ամազոնից մի քիչ հարաւ՝*
*Տեղատարափ թութակների,*
*Մեր շէն կեանքը էս ի՞նչ դառաւ՝*
*Զբօսանաւ ախմախների:*
*Սխա՛լ, սխա՛լ աններելի՝*
*Իրանում՝ նաւթ, Դանիայում՝ նաւ,*
*Հայաստանում կարկուտն էլի*
*Ծիրանի սաղ բերքը փարաւ:*
*Ամազոնից մի քիչ հարաւ*
*Շլդոյ մի հայ դաչա առաւ...*
*Արա վա՛յ-վա՛յ. հա՛ֆ-հա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ...*[51]:

Գուցէ իր ապրած ժամանակն է փոխուել, գուցէ ինքը՝ Հովէեանը: Բայց անկախ սպասելի ու անսպասելի որեւէ փոփոխութիւնից՝ Հովէեանի գիրը միշտ հետաքրքիր է, գաղտնաշատ, հանելուկային:

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Պայմանականօրէն վերջակէտելով մեր ուսումնասիրութիւնը՝ եւս մէկ անգամ նշենք, որ հեղինակները, որոնց անդրադարձել ենք, լինելով մերօրեայ գեղարուեստական չափածոյ խօսքի ակնառու ներկայացուցիչները, այնուամենայնիւ իրենցով չեն սպառում այն ողջ ասելիքն ու բանաստեղծական դաշտը, որը բնորոշում է որպէս յետխորհրդային շրջանի հայ քնարերգութիւն: Այդ քնարերգութիւնը շատ աւելի հարուստ է, բազմազան, գունեղ, եւ այն ամփոփ կերպով ներկայացնելը, անտարակոյս, մէկ մարդու եւ մէկ յօդուածի սահմաններում չտեղաւորուող տարածութիւն է:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Իրատես Պարբերական*, 12 Դեկտեմբեր 2014:

[2] Հենրիկ Էդոյեանը ներկայացուող բանաստեղծներից ամենաաւագն է տարիքով: Մեր վերլուծութեան մէջ բանաստեղծները ներկայացուած են այդ սկզբունքով՝ ըստ տարիքի:

[3] Հենրիկ Էդոյեան, *Երկերի ժողովածու, Հտր. 2*, Երեւան, Վան Արեան, 2010, էջ 19:

[4] Նոյնն է՝ սրճարան:

[5] Նոյն, էջ 125:

[6] Նոյն, էջ 196:

[7] Նոյն, էջ 37:

[8] Նոյն, էջ 136:

[9] Նոյն, էջ 283:

[10] Նոյն, էջ 327:

[11] Նոյն, էջ 323:

[12] https://gisher.org/artem-harutyunyan-t21802.html :

[13] Նոյն:

[14] Արտեմ Յարութիւնեան, *Հեռատպագրէմներ 'Շուշի' եւ 'Բաբելոն' Հիւրանոցների Աշխարակից*, Երեւան, Տիգրան Մեծ, 2010, էջ 255:

[15] Նոյն, էջ 295:

[16] Ռուսերէն աղաւաղուած արտայայտութիւն, որ նշանակում է բնական, ճիշտ:

[17] Նոյն, էջ 132:

[18] Նոյն, էջ 63:

[19] Աղացած մսից պատրաստուած կերակրատեսակի ռուսերեն անուանում:

[20] Նոյն, էջ 188:

[21] Նոյն, էջ 191:

[22] Նոյն, էջ 70:

[23] Էդուարդ Միլիտոնեան, *Է*, Երեւան, Ծիծեռնակ Հրատ., 2013, էջ 80:

[24] Նոյն, էջ 30:

[25] http://www.grakantert.am/%D5%A7%D5%A4%D5%BE%D5%A1%D6%80%D5%A4-%D5%B4%D5%AB%D5%AC%D5%AB%D5%BF%D5%B8%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6-15-%D5%A9%D5%AB%D5%BE%D5%A8-%D5%BD%D5%A1%D6%80%D5%AB-%D5%A9%D5%A1%D5%B2%D5%AB-%D5%B4%D5%A5/ :

[26] Միլիտոնեան, *Է*, էջ 236:
[27] Նոյն, էջ 169:
[28] Նա 1991-1996 թուականներին ՀՀ մշակոյթի նախարար էր:
[29] Յակոբ Մովսէս, *Եօթներորդ Որսորդութիւն*, Երեւան, Անտարէս, 2013, էջ 28:
[30] Նոյն, էջ 64:
[31] Նոյն, էջ 315:
[32] Նոյն, էջ 21:
[33] Նոյն, էջ 201:
[34] Նոյն, էջ 147:
[35] Նոյն, էջ 301:
[36] Նոյն, էջ 178:
[37] Նոյն, էջ 65:
[38] Նոյն, էջ 38:
[39] Նոյն, էջ 258:
[40] http://granish.org/hotel-yerevan/
[41] Ռուսերէն եզրոյթ, որ նշանակում է խառնակիչ, բանսարկու:
[42] Նոյն:
[43] Ռուսերէն եզրոյթ, որ նշանակում է պատժախուց:
[44] Նոյն:
[45] http://www.yerkir.am/news/view/58534.html
[46] Նոյն:
[47] Նոյն:
[48] Հովիկ Հովէեան, *Ուրարտական Անձրեւներ*, Երեւան, ԳԱՍՊՐԻՆՏ, 2010, էջ 45:
[49] Նոյն, էջ 124:
[50] Նոյն, էջ 240:
[51] Հովիկ Հովէեան, *Անժամանակութիւն*, Երեւան, Հայագիտակ, 2015, էջ 204:

## IMAGES OF POST-SOVIET ARMENIAN POETRY
(Summary)

Karine Rafaelian
karine.rafaelyan@mail.ru

The article is a brief overview on post-Soviet-Armenian poetry. It highlights the writings of contemporary Armenian poets Henrik Edoyan, Artem Harutyunyan, Edward Militonyan, Hakob Movses, Armen Shekoyan and Hovik Hoveyan and the issues they raise: love, patriotism, life and death, political and historical events, simple daily and deep philosophical issues, etc.